ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
23/04/2006թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 2)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՓՈՓՈԽՎԱԾ Է

Բաժնետերերի ընդհանուր ժողովի.
14/04/2011թ. թիվ 8 որոշմամբ
23/04/2014թ. թիվ 11 որոշմամբ
28/04/2016թ. թիվ 13 որոշմամբ
25/04/2019թ. թիվ 17-5 որոշմամբ
26/05/2020թ. թիվ 18-7 որոշմամբ
30/04/2021թ. թիվ 19-4 որոշմամբ
07/12/2021թ. թիվ 20-3 որոշմամբ
25/05/2023թ. թիվ 23-5 որոշմամբ
21/11/2024թ. թիվ 25-2 որոշմամբ
21/11/2024թ. թիվ 25-3 որոշմամբ

Խորհրդի նախագահ

Ռաֆայել Սարգսյան *(ստորագրություն)*

Գլխավոր գործադիր տնօրեն
Հակոբ Անդրեասյանի էլ. ստորագրություն

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Մարտին Գալստյան *(էլ. ստորագրություն)*

Գրանցված է 25/12/2024թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ 4
3. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ....6
4. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6
5. ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....7
6. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 9
7. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ....9
8. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ....16
9. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ....23
10. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ 25
11. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ....26
12. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....26
13. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ 27
14. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ 27
15. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ 27
16. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ....28
17. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 28

(Բովանդակությունը լրացվել է 28/04/2016թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 13 որոշմամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկը ստեղծվել է 28.08.1995թ. ընդհանուր ժողովի որոշման և 01.12.1995թ. հիմնադիր պայմանագրի հիման վրա: «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկը 09.09.2006թ. Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության: «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը 26.05.2020թ. Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Բանկ):

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է ունիվերսալ բանկ:

1.2. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը առևտրային կազմակերպություն է և իր գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ է հետապնդում:

1.3. Բանկի գործունեության հիմնական նպատակն է օժանդակել տնտեսության, փոքր և միջին բիզնեսի, գյուղատնտեսության զարգացմանն ու ամրապնդմանը:

1.4. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որն ունի պարտադիր բնույթ Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար: Բանկը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով:

1.5. Բանկն իր գործունեության մեջ անկախ է պետությունից: Բանկի կանոնադրական հիմնադրամը բաժանված է նրա բաժնետերերի միջև իրենց պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

Բանկը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու պահից:

1.6. Բանկը կարող է մտնել բանկերի գործունեության համակարգման, շահերի պաշտպանության, տեղեկությունների փոխանակման, կադրերի պատրաստման և բանկային քաղաքականության մշակման համար ստեղծվող միությունների մեջ:

1.7. Բանկը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.8. Բանկը բանկային բոլոր գործառնություններն իրականացնում է իր անունից, բանկային գործունեության լիցենզիայի շրջանակներում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.9. Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արամի փողոց 82-84 շենք, 89, 99, 100 տարածքներ:

1.10. Բանկն ունի կլոր կնիք՝ իր ապրանքային նշանի պատկերով և հայերեն ու անգլերեն լեզուներով իր անվանմամբ, ինչպես նաև ապրանքային նշաններ, դրոշմակնիքներ և ձևաթղթեր:

1.11. Բանկի լրիվ անվանումն է՝
հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն,
անգլերեն՝ “ACBA BANK” open joint stock company:
Բանկի կրճատ անվանումն է՝
հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ»,
անգլերեն՝ “ACBA BANK”:

1.12. Բանկը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է ունենալ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Բանկի կանոնադրության, ներքին իրավական ակտերի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունների համաձայն: Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչություններն իրավաբանական անձինք չեն:

1.13. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը կատարվում է օրենքով սահմանված կարգով: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության դադարեցումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

1.14. Բանկը պատասխանատու է իր և իր մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների պարտավորությունների համար: Բանկը պատասխանատու չէ պետության պարտավորությունների համար, պետությունը պատասխանատու չէ Բանկի պարտավորությունների համար, բացի այն դեպքերից, երբ Բանկը կամ պետությունը ստանձնել են այդպիսիք: Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բաժնետերերը պատաս-խանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

(1-ին բաժինը փոփոխվել է բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի 28/04/2016թ. թիվ 13 որոշմամբ; վերախմբագրվել է 25/04/2019թ. ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ, փոփոխվել է 26/05/2020թ. ընդհանուր ժողովի թիվ 18-7 որոշմամբ)

2. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

2.1. Բանկն ունի կանոնադրական հիմնադրամ, որը հավասար է տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքների գումարին:

2.2. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 89,775,000,000 (ութսունինը միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ: Բանկի կանոնադրական հիմնադրամը բաժանված է 5,985,000 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար)

հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

2.3. Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա (հայտարարված) սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) հատ՝ յուրաքանչյուրը 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով Դրանք այն բաժնետոմսերն են, որոնք Բանկը կարող է տեղաբաշխել, բացի տեղաբաշխված բաժնետոմսերից:

2.4. Բանկի կանոնադրական հիմնադրամում մեկ բաժնետիրոջը պատկանող Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն քանակ չի սահմանվում:

2.5. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

2.6. Բանկն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը, եթե նախկինում թողարկված բաժնետոմսերը լրիվ վճարվել են: Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Բանկը չի կարող ավելացնել կանոնադրական հիմնադրամն ավելի, քան բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

2.7. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևով արգելվում է, բացի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

2.8. Օրենքով նախատեսված դեպքերում Բանկը կարող է հետ գնել իր բաժնետոմսերը: Բանկի կողմից իր բաժնետոմսերի հետգնման դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի հետագա իրացման մասին որոշումը կայացվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից: Ընդ որում՝ Բանկի կողմից իր բաժնետոմսերի հետգնման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը: Բանկը պարտավոր է իր բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից առնվազն երկու ամսվա ընթացքում իրացնել դրանք:

2.9. Բանկի ընդհանուր հիմնադրամը ձևավորվում է հիմնական և լրացուցիչ հիմնադրամների հանրագումարից, որոնք ներառում են կանոնադրական հիմնադրամը, գլխավոր պահուստը, չբաշխված շահույթը, այլ պահուստները, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

2.10. Բանկում ստեղծված է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ)՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սույն կետով սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա

հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև Բանկի նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամը օգտագործվում է օրենքով սահմանված նպատակներով:

2.11. Բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ Բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը:

(2-րդ բաժինը լրացվել է բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի 23/04/2014թ. թիվ 11 որոշմամբ; փոփոխվել է 28/04/2016թ. ընդհանուր ժողովի թիվ 13 որոշմամբ; վերախմբագրվել է 25/04/2019թ. ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ, փոփոխվել է 26/05/2020թ. ընդհանուր ժողովի թիվ 18-7 որոշմամբ, փոփոխվել է 30/04/2021թ. ընդհանուր ժողովի թիվ 19-4 որոշմամբ, փոփոխվել է 07/12/2021թ. ընդհանուր ժողովի թիվ 20-3 որոշմամբ, լրացվել է 25/05/2023թ. ընդհանուր ժողովի թիվ 23-5 որոշմամբ, փոփոխվել է 21/11/2024թ. արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 25-2 որոշմամբ)

3. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

3.1. Բանկը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր:

Բանկն անց է կացնում իր թողարկած բաժնետոմսերի բաց կամ փակ բաժանորդագրություն՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են: Բաց բաժանորդագրության ձևով բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում Բանկի խորհուրդը հաստատում է բաժնետոմսերի թողարկման ազդագիրը, որը ենթակա է հաստատման ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Բանկի թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի նրա կանոնադրական հիմնադրամի 25 տոկոսը:

3.2. Բանկի բաժնետոմսն անբաժանելի է:

3.3. Բանկի կողմից իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալը արգելվում է, բացի օրենքով նախատեսված դեպքերի:

3.4. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց մյուս բաժնետերերի համաձայնության:

(3-րդ բաժինը փոփոխվել է 26/05/2020թ. ընդհանուր ժողովի թիվ 18-7 որոշմամբ)

4. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Բանկի յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի.

1) մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ իրեն պատկանող բաժնետոմսերի չափով՝ ձայների իրավունքով,
2) մասնակցել Բանկի կառավարմանը,

3) ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

4) օգտվել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման իրենց նախապատվության իրավունքից,

5) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկատվությունը, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին (սույն տեղեկատվությունը Բանկի բաժնետերերին տրամադրվում է անվճար՝ նրանց գրավոր դիմումի հիման վրա, երեք աշխատանքային օրվա ընթացքում),

6) Բանկի բաժնետերերը, որոնք Բանկի կանոնադրական հիմնադրամում տիրապետում են ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ պակաս 5 տոկոսին, իրավունք ունեն պահանջել ֆինանսատնտեսական գործունեության ստուգում արտաքին աուդիտի կողմից: Այդ դեպքում Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

7) բաժնետերերի ընդհանուր ժողովներին իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

8) հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,

9) քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,

10) հայցով դիմել դատարան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

11) Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,

12) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4.2. Բանկի բաժնետերերը պարտավոր են.

1) սահմանված ժամկետում ապահովել հայտարարված բաժնեմասնակցության չափի գումարների ներդրումը Բանկի կանոնադրական հիմնադրամում,

2) չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները,

- իրականացնել օրենքով իրենց վերապահված այլ պարտականությունները:

(4-րդ բաժինը փոփոխվել է 28/04/2016թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 13 որոշմամբ, վերախմբագրվել է 25/04/2019թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ)

5. ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Բանկը կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները.

1) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

2) տրամադրել վարկեր, իրականացնել դրամական պահանջների զիջման կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

3) տրամադրել բանկային երաշխիքներ, բացել կամ իրականացնել հաշվարկներ ակրեդիտիվներով (վարկային նամակներ),

4) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ, բացել, վարել, սպասարկել բանկային հաշիվներ, ներառյալ՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,

5) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, նման այլ գործառնություններ կատարել,

6) ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել,

7) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում),

8) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների, բանկային ոսկու, ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ,

9) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

10) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

11) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

12) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

13) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հավաքագրման հետ կապված գործունեություն,

14) իրականացնել չարգելված այլ գործառնություններ:

5.2. Բանկը կարող է իրականացնել նաև օրենքով սահմանված, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից թույլատրված օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ: Բանկի կողմից գործառնությունների պատվիրակումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:

5.4. Բանկն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ՝ արտարժույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.5. Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

(5-րդ բաժինը վերախմբագրվել է 25/04/2019թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ)

6. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

1) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով),
2) Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
3) Բանկի գլխավոր գործադիր տնօրենը (այսուհետ՝ Գլխավոր գործադիր տնօրեն):

Խորհուրդը և Գլխավոր գործադիր տնօրենը կառավարում են Բանկի գործունեությունը սույն կանոնադրությամբ իրենց տրված լիազորությունների շրջանակներում:

Բանկն ունի գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ստորաբաժանում, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և Կորպորատիվ քարտուղար:

(6-րդ բաժինը վերախմբագրվել է 25/04/2019թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ)

7. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

7.1. Ընդհանուր ժողովը Բանկի բարձրագույն կառավարման մարմինն է:

7.2. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում.

1) Բանկի կանոնադրության հաստատումը (ներառյալ՝ կազմակերպա-իրավական ձևի փոփոխությունը, գործունեության ժամկետի փոփոխությունը կամ երկարաձգումը, գրանցման վայրի փոփոխությունը), դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2) Բանկի վերակազմակերպումը (միաձուլումները, միացումները, բաժանումները, առանձնացումները, վերակազմավորումները), հարկային ռեզիդենտության կամ կորպորատիվ տեսակի փոփոխությունները,
3) Բանկի լուծարումը, կամավոր լուծարումը և/կամ գործունեության դադարեցումը, ընթացիկ բիզնեսի փոխանցման նպատակով ակտիվների մասնակի օտարումը կամ բիզնես լիզինգով տրամադրումը,
4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
5) Խորհրդի կազմում անդամների թվի կրճատման կամ ավելացման վերաբերյալ ցանկացած որոշման կայացումը, Խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ ընդհանուր ժողովը չունի խորհրդի անդամների ընտրության և լիազորությունների դադարեցման իրավասություն: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

7) օրենքով սահմանված արտաքին աուդիտն իրականացնող անձանց նշանակումը և ազատումը,

8) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Բանկի կողմից ձեռք բերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

9) մեկ տարվա ընթացքում մեկ ընկերության կամ ընկերությունների խմբի հետ նշանակալի ակտիվների օտարման կամ գնման ցանկացած գործարքի հաստատումը, որը գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 20 տոկոսը,

10) մեկ տարվա ընթացքում Բանկի ընդհանուր կապիտալի 20 տոկոսից ավել ակտիվների նկատմամբ (ներառյալ ցանկացած բաժնետոմս կամ այլ գույքային իրավունք) ապահովված իրավունքի, երաշխավորության կամ գրավի իրավունքի տրամադրման հաստատումը,

11) Բանկին պատկանող և Բանկի ընթացիկ կամ ապագա գործունեության համար անհրաժեշտ ցանկացած մտավոր սեփականության իրավունքի վաճառքի, օտարման, փոխանցման կամ լիցենզիայի տրամադրման հետ կապված ցանկացած որոշում,

12) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը,

13) ֆինանսական տարվա ավարտի ամսաթվի ցանկացած փոփոխություն,

14) շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման, դրանց վճարման չափն ու պայմանները հաստատելու մասին որոշումների ընդունումը, որոնք քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում,

15) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,

16) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

17) բաժնետոմսերի համախմբումը և բաժանումը,

18) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

19) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, բաժնային կամ պարտքային այնպիսի արժեթղթերի և/կամ այլ այնպիսի արժեթղթերի թողարկումը, որոնք Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության կամ ձայնի իրավունքի որոշակի հնարավորություն են տալիս, ներառյալ՝ ցանկացած օպցիոններ կամ օպցիոններին նման այլ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև աշխատողների և ավագ ղեկավարների շահույթի բաշխման ցանկացած պլան, բացառությամբ փոխարկելի ստորադաս վարկերի, այնքանով, որքանով որ փոխարկումն անհրաժեշտ է ՀՀ Կենտրոնական բանկի տնտեսական նորմատիվներով վարկը Բանկի կապիտալի հաշվարկներում ներառելու կամ պարտադիր փոխարկման համաձայն արժեթղթերի տեղաբաշխման համար: Սույն կետի իմաստով պարտադիր փոխարկում նշանակում է ՀՀ

Կենտրոնական բանկի սահմանած կարգերի և (կամ) տնտեսական նորմատիվների համաձայն՝ Բանկին տրված վարկի փոխարկումը կանոնադրական կապիտալի,

20) Արժեթղթերի հրապարակային առաջարկի, ցուցակման կամ ապացուցակման վերաբերյալ ցանկացած որոշում, ներառյալ այդպիսի ցուցակման պայմանների սահմանումը: Սույն ենթակետի իմաստով արժեթղթեր են համարվում ցանկացած բաժնետոմս կամ Բանկի կողմից թողարկված կամ թողարկման ենթակա այլ արժեթուղթ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անմիջապես կամ ապագայում կտրամադրի հասանելիություն Բանկի կանոնադրական կապիտալին, շահույթին, լուծարային արժեքին կամ ձայնի իրավունքին, ինչպես նաև այդ արժեթղթերի ցանկացած մաս,

21) Բանկի հետ կապված անձանց հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն այնպիսի գործարքների կնքումը, եթե գործարքը կամ մեկից ավել փոխկապակցված գործարքների խումբը կնքվում են Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց արժեքը գերազանցում է Բանկի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 2 տոկոսը,

22) Ցանկացած որոշում, որը վերաբերում է այնպիսի պետությունում ներդրման կատարմանը, որտեղ Բանկը և իր դուստր ընկերությունները (այսուհետ նաև՝ «Բանկի Խումբ») նախկինում էական գործունեություն չեն ծավալել կամ Բանկի Խմբի ընկերությունների գրանցման վայր հանդիսացող պետության փոփոխությունը, բացառությամբ օտարերկրյա պետական և կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքումը, այլ ֆինանսական հաստատությունների հետ գործարքների կնքումը, ներառյալ թղթակցային հաշիվների և դրանց մնացորդների հետ կապված գործարքները, արժեթղթերի հաշիվների հետ կապված գործարքները, ավանդները, սվոփերը, ռեպո գործարքները և ածանցյալ ֆինանսական գործարքները,

23) Բանկի աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը, ինչպես նաև նշված ծրագրերի հետ կապված կամ այդ ծրագրերից բխող ցանկացած որոշում,

24) հաստատված օրակարգի շրջանակում՝ օրենքով Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն համարվող այլ հարցեր:

7.3. Սույն կանոնադրության 7.2 կետում նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմիններին: Ընդհանուր ժողովը չի կարող քննարկել և որոշում ընդունել իր իրավասությանը չվերաբերող հարցերի վերաբերյալ:

7.4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով այդ բաժնետոմսերի անվանատերերը,

բ) Բանկի բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները (Գլխավոր գործադիր տնօրեն, նրա տեղակալներ, Բանկի գլխավոր հաշվապահ)՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

գ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ,

դ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),

ե) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ,

զ) անհրաժեշտության դեպքում՝ հրավիրված անձինք:

7.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան, իսկ ցուցակը կազմելու օրվա և ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:

Եթե Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

Բանկն իր մասնակիցների Ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրական հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Բանկի այն մասնակիցներին, որոնք գրանցված են Բանկի մասնակիցների ռեեստրում:

Բանկի մասնակցի պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի մասնակիցների խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

7.6. Ընդհանուր ժողովը գումարվում է տարին առնվազն մեկ անգամ: Ընդհանուր ժողովը համարվում է իրավասու, եթե Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը, որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

7.7. Բաժնետերերը Ընդհանուր ժողովին հրավիրվում են անհատապես: Ընդհանուր ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից:

7.8. Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերը պետք է ծանուցվեն Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ: Ծանուցումը պետք է առնվազն պարունակի օրենքով նախատեսված տեղեկությունները: Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը և քվեաթերթիկների տրամադրումը Խորհրդի որոշմամբ կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով կամ առձեռն հանձնելով կամ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով): Ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակվում է նաև Բանկի տնային կայքէջում և մամուլում:

7.9. Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝

1) Ընդհանուր ժողովի գումարման ժամանակը, վայրը և ձևաչափը,
2) Ընդհանուր ժողովի օրակարգը,
3) Ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,
4) բաժնետերերին ծանուցման կարգը և եղանակները,
5) բաժնետերերին տրամադրվող տեղեկատվության ցանկը,
6) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են դրանցով, ինչպես նաև քվեաթերթիկները ներկայացնելու կարգը և ժամկետները:

7.10. Ընդհանուր ժողովը կարող է գումարվել հեռակա քվեարկության (հարցման), այդ թվում՝ քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով Ընդհանուր ժողով անցկացնելու դեպքում, նախապես, առնվազն երեսուն օր առաջ, անձամբ ուղարկելու կամ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով) Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին է ուղարկվում Ընդհանուր ժողովի օրակարգը և օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ստացվում է նրանց կարծիքները: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով

ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

7.11. Ընդհանուր ժողովը կարող է որոշումներ ընդունել նաև այնպես, որ Ընդհանուր ժողովի ժամանակ բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման Ընդհանուր ժողովը հեռակա (հարցման) կարգով անցկացված չի համարվում: Սույն կարգով անցկացվող Ընդհանուր ժողովներում կարող են որոշումներ ընդունվել միայն օրենքով չարգելված հարցերի վերաբերյալ: Կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով քվեարկությամբ Ընդհանուր ժողով գումարելու դեպքում Խորհրդի որոշմամբ կարող է նախատեսվել, որ քվեարկությունը կարող է տևել մեկ օրից ավել: Այդ դեպքում քվեարկության արդյունքներն ամփոփվում են դրա համար նախատեսված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, նույն մասնակցի կողմից մեկից ավելի անգամ լրացված քվեաթերթիկ տրամադրելու դեպքում հաշվի է առնվում ավելի ուշ ներկայացված քվեաթերթիկը և/կամ դիրքորոշումը:

7.12. Բանկում ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի քանակական կազմը և անդամները, ինչպես նաև լիազորությունների ժամկետը սահմանվում են ժողովի որոշմամբ՝ Խորհրդի ներկայացմամբ: Հաշվիչ հանձնաժողովի կազմը չի կարող երեք հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Բանկի խորհրդի անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը և տեղակալները կամ վերջիններիս լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձինք կամ այդ պաշտոնների թեկնածուները: Հաշվիչ հանձնաժողովի գործառույթների կատարումը կարող է դրվել Բանկի մասնագիտացված գրանցողի վրա: Հաշվիչ հանձնաժողովը որոշում է ժողովի քվորումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ է տալիս ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ, ապահովում է քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության արդյունքները, դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն և արխիվացնում է քվեաթերթիկները:

7.13. Ընդհանուր ժողովի նիստերը արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է Ընդհանուր ժողովի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում՝ առնվազն երկու օրինակից: Արձանագրությունն ստորագրում են Ընդհանուր ժողովի նախագահն ու քարտուղարը: Նախագահը պատասխանատվություն է կրում Ընդհանուր ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Արձանագրությունում նշվում են.

1) Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
2) Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը,
3) Ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը,
4) Ընդհանուր ժողովի նախագահի, քարտուղարի անունները, օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի Ընդհանուր ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրած հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ընդունած որոշումները: Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Ընդհանուր ժողովի արձանագրություններին:

7.14. Սույն կանոնադրության 7.10 կետում նշված կարգով անցկացվող Ընդհանուր ժողովների արձանագրությունը կազմվում է օրակարգի հարցերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման հիման վրա:

7.15. Սույն կանոնադրության 7.2 կետի 1, 2, 3, 4, 6, 8, 9, 17 և 23 ենթակետերում նշված հարցերով որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով: Իսկ նույն կետի 3, 8, 17 և 24 ենթակետերում նշված հարցերով որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից: Մնացած հարցերի գծով Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

7.16. Ընդհանուր ժողովները նախագահում է Խորհրդի նախագահը: Եթե Խորհրդի նախագահը բացակայում է, ապա Խորհուրդը պետք է ընտրի Ընդհանուր ժողովի նախագահող:

7.17. Քվեարկությունների ժամանակ յուրաքանչյուր բաժնետեր ունի ձայնի իրավունք՝ կախված կանոնադրական հիմնադրամում իր բաժնեմասնակցության չափից: Քվեարկությունը ժողովում իրականացվում է «մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով: Բանկի բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:

7.18. Բանկի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովի, բաժնետերերի կողմից ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման, ժողովում բաժնետիրոջ մասնակցության և քվեարկության հետ կապված այլ հարցերը, այդ թվում՝ Ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը, որոնք չեն նախատեսվել սույն կանոնադրությամբ, կարգավորվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթներով:

(7-րդ բաժինը վերախմբագրվել է 28/04/2016թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 13 որոշմամբ; վերախմբագրվել է 25/04/2019թ. և ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ, փոփոխվել է 07/12/2021թ. ընդհանուր ժողովի թիվ 20-3 որոշմամբ, փոփոխվել է 21/11/2024թ. արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 25-3 որոշմամբ)

8. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

8.1. Բանկի Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

8.2. Բանկի Խորհուրդը կազմված է 11 անդամներից:

8.3. Բանկի Խորհուրդը կազմված է բաժնետերերի ներկայացուցիչներից, ինչպես նաև կարող է իր կազմում ունենալ անկախ անդամներ: Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, կարող են Բանկի Խորհրդի կազմում ընդգրկել իրենց ներկայացուցչին՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության:

Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում ներկայացուցիչ ունենալ Խորհրդի կազմում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Միավորված բաժնետերերի ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում կատարվում է միայն Բանկի բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում: Պայմանագրի նկատմամբ պահանջները սահմանվում են օրենքով:

Բանկի բոլոր այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, սակայն չեն միավորվել սույն կետի երկրորդ պարբերությամբ նշված կարգով՝ Խորհրդի կազմում իրենց ներկայացուցչին ընդգրկելու համար, կարող են իրենց միասնական ներկայացուցչին ընտրել և ընդգրկել Խորհրդում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Այդ ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն սույն պարբերությամբ նախատեսված Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզ նրանց թիվը լինի մեկ, իսկ միասնական ներկայացուցիչն ընտրվում է ընտրողների ձայների պարզ մեծամասնությամբ: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին՝ օրենքով պահանջվող տեղեկատվությունը Խորհրդի կողմից ներկայացվում է Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

8.4. Խորհրդի այն անդամները, որոնք չեն ընտրվում սույն կանոնադրության 8.3 կետի համաձայն, ընտրվում են Բանկի տարեկան Ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ ընտրողների ձայների պարզ մեծամասնությամբ:

8.5. Խորհրդի անկախ անդամը չի ներկայացնում որևէ բաժնետիրոջ կամ շահառուի շահը, իր գործունեության մեջ դրսևորում է անաչառություն և անկողմնակալություն, կոչված է Բանկին մատուցել պրոֆեսիոնալ ծառայություններ: Խորհրդի անկախ անդամն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների մեծամասնությամբ:

8.6. Ընդհանուր ժողովին Բանկի Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի մասնակիցները, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ Խորհրդի ձևավորման դեպքում): Ընդ որում, Խորհրդի անկախ անդամների առաջադրման հետ կապված Խորհրդի կանոնակարգով կարող են սահմանվել հատուկ կարգավորումներ:

8.7. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

8.8. Բանկի Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նոր անդամ նշանակվում է սույն կանոնադրության 8.3, 8.5 և 8.6 կետերում սահմանված կարգին համապատասխան:

8.9. Բանկի Խորհրդի անդամները Խորհրդի նիստերին մասնակցելու համար վարձատրվում են: Խորհրդի անդամների վարձատրության չափը և կարգը սահմանում է Խորհուրդը:

8.10. Բանկի Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից:

Բանկի Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) նախագահում է Ընդհանուր ժողովում,

ե) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը, եթե այդպիսիք առկա են:

8.11. Խորհրդի իրավասություններն են՝

1) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

2) Բանկի Խմբի ընկերությունների կողմից իրենց գործունեության շրջանակներից դուրս էական գործունեության ծավալումը կամ Բանկի Խմբի ընկերությունների բիզնեսի կամ գործունեության տեսակի փոփոխությունը, բացառությամբ Բանկի կողմից ցանկացած նոր գործունեության ծավալման, որը

թույլատրելի է իր բանկային գործունեության լիցենզիայով և իր ֆինանսական կազմակերպություն հանդիսացող դուստր ընկերության կողմից այնպիսի նոր գործունեության ծավալման, որը թույլատրելի է իր վարկային կազմակերպության լիցենզիայով,

3) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

4) Բանկի Խմբի ընկերությունների Գլխավոր գործադիր տնօրենի, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների, և Բանկի գործադիր մարմնի այլ անդամների նշանակումը, վարձատրության պայմանների հաստատումը (ներառյալ ցանկացած տեսակի բնեղենով օգուտների տրամադրումը և շահույթի բաշխման սխեմաները), լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, պաշտոնավարման ժամկետի փոփոխությունները,

5) Բանկի Խմբի ընկերությունների այնպիսի աշխատակիցների կամ ղեկավարների աշխատանքի ընդունումը, նրանց վարձատրության պայմանների սահմանումը (ներառյալ ցանկացած տեսակի բնեղենով օգուտների տրամադրումը և շահույթի բաշխման սխեմաները), աշխատանքից ազատումը և աշխատանքային պայմանագրերում փոփոխությունների հաստատումը, որոնց տարեկան ընդհանուր վարձատրության չափը (հաստատուն և փոփոխական) գերազանցում է 120,000,000 (հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամը,

6) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

7) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

8) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

9) շահութաբաժինների վճարման, դրանց չափի, վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

10) Բանկի շահութաբաժնային քաղաքականության ցանկացած փոփոխության հաստատումը,

11) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,

12) Ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

13) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

14) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

15) Բանկի կողմից ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող քաղաքականությունների ընդունումը,

16) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորա-բաժանումների կանոնադրությունների հաստատումը, բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

17) Բանկի Խմբի ընկերությունների պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը, որոնք հասանելիություն են տրամադրում կանոնադրական կապիտալին կամ ձայնի իրավունքների, այդ թվում՝ օպցիոններ, օպցիոնների նման այլ ֆինանասկան գործիքներ, ինչպես նաև աշխատակիցների և ավագ ղեկավարների համար շահույթի բաշխման ցանկացած պլանի մասին որոշումների ընդունումը,

18) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների ստեղծումը, համալրումներն ու օգտագործումը,

19) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

20) Բանկի Խմբի ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, մեթոդների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը, և ցանկացած փոփոխության հաստատումը,

21) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

22) Բանկի Խմբի ընկերությունների կողմից ցանկացած տեսակի ընկերակցության կամ համատեղ գործունեության մասին որոշման ընդունման (այդ թվում՝ համատեղ գործունեության մասին պայմանագիր կնքելու կամ նոր իրավաբանական անձ հիմնադրելու եղանակով) կամ նույն բիզնես ոլորտի ընկերությունների հետ շահույթի բաշխման վերաբերյալ հարաբերությունների (բացառությամբ ֆինանսական ծառայություններին կամ պրոդուկտներին առնչվող) հաստատման և դրանց փոփոխությունների վերաբերյալ որոշումների ընդունումը,

23) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը, մասնակցության չափի փոփոխությունները և դադարեցումները,

24) բանկային միությունների, ասոցիացիաների և առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,

25) բանկային միություններին, ասոցիացիաներին և առևտրային կազմակերպությունների միություններին մասնակցությունը կամ անդամակցությունը,

26) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով կանոնադրական հիմնադրամի ավելացումը,

27) Բանկի Խմբի ընկերությունների կողմից ներդրումային ծառայություններ մատուցող ընկերության կամ տեղաբաշխողի ընտրության հետ կապված ցանկացած որոշման ընդունումը, ներառյալ ժամկետների և պայմանների սահմանումը,

28) Բանկի Խմբի ընկերությունների կողմից մեկ տարվա ընթացքում մեկ ընկերության կամ ընկերությունների խմբի հետ նշանակալի ակտիվների օտարման կամ գնման ցանկացած գործարքի հաստատումը, որը կազմում է Բանկի Խմբի համապատասխան ընկերության ընդհանուր կապիտալի 10-ից 20 տոկոսը,

29) Բանկի Խմբի ընկերությունների կողմից ցանկացած այնպիսի պայմանագրի կնքման կամ դրանում փոփոխությունների վերաբերյալ որոշման ընդունումը, որն իր բնույթով բիզնեսի բնականոն շրջանակներից դուրս է կամ չի համապատասխանում շուկայական պայմաններին,

30) Բանկի Խմբի ընկերությունների կողմից ցանկացած այնպիսի արտաքին ծառայություններ մատուցողի ներգրավման, փոխհատուցման, ծառայությունների դադարեցման և պայմանների փոփոխության վերաբերյալ որոշումների ընդունումը, որի համախառն տարեկան փոխհատուցման չափը (հաստատուն և, ըստ կիրառելիության՝ փոփոխական) գերազանցում է 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամը,

31) Բանկի կողմից փոխարկելի ստորադաս փոխառությունների ներգրավման վերաբերյալ որոշումների ընդունումը, որքանով որ փոխարկումն անհրաժեշտ է ՀՀ Կենտրոնական բանկի տնտեսական նորմատիվներով վարկը Բանկի կապիտալի հաշվարկներում ներառելու համար,

32) Բանկի կողմից այնպիսի գործարքների կնքումը, որտեղ օրենսդրության համաձայն առկա է շահագրգռվածություն,

33) Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ կապված անձ համարվող անձանց հետ գործարքների և դրանց փոփոխությունների կամ այդպիսի գործարքների պայմանները սահմանող ներքին իրավական ակտի հաստատումը,

34) Բանկի Խմբի ընկերությունների կողմից օրենսդրության համաձայն՝ նշանակալի բաժնետիրոջ, խորհրդի անդամի, գլխավոր գործադիր տնօրենի, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի, ներքին աուդիտի ղեկավարի, գործադիր ղեկավարի, կառավարման մարմի այլ անդամի կամ նշված ցանկի աձանց ընտանիքի անդամների հետ գործարքների և դրանց փոփոխությունների, կամ այդպիսի գործարքների պայմանները սահմանող ներքին իրավական ակտի հաստատումը,

35) մեկ տարվա ընթացքում Բանկի ընդհանուր կապիտալի 10-ից 20 տոկոսը կազմող ակտիվների նկատմամբ (ներառյալ ցանկացած բաժնետոմս կամ այլ գույքային իրավունք) ապահովված իրավունքի, երաշխավորության կամ գրավի իրավունքի տրամադրման հաստատումը,

36) ֆինանսական միջնորդի կամ ներդրումային ծառայություններ մատուցող ընկերության նշանակման վերաբերյալ ցանկացած որոշման ընդունումը՝ կապված 5

տոկոսից ավելի բաժնեմասնակցություն ունեցող բաժնետիրոջ կողմից դուրս գալու հետ,

37) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

8.12. Բանկի Խորհուրդն իր աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար կարող է ստեղծել կից հանձնաժողովներ, որոնցում կարող են ընդգրկվել ինչպես Խորհրդի անդամները, այնպես էլ Բանկի այլ ղեկավարները և աշխատակիցները: Սույն հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

8.13. Առնվազն տարին մեկ անգամ Խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

8.14. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհուրդը պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Գլխավոր գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

8.15. Խորհրդի նիստերը անցկացվում են առնվազն երկու ամիսը մեկ:

8.16. Խորհրդի նիստի գումարման մասին անդամները պետք է ծանուցվեն նիստի գումարման օրվանից առնվազն երեք օր առաջ: Ծանուցումը պետք է առնվազն պարունակի օրենքով նախատեսված տեղեկությունները: Ծանուցումը կարող է իրականացվել կամ պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով կամ առձեռն հանձնելով կամ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով):

8.17. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Գլխավոր գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի հինգ կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

8.18. Խորհրդի նիստերի քվորումը չի կարող Խորհրդի անդամների կեսից պակաս լինել:

8.19. Սույն կանոնադրության 8.11 կետում նշված որոշումները Խորհրդի կողմից ընդունվում են հետևյալ կարգով.

1) Սույն կանոնադրության 8.11 կետի 2, 4, 5, 10, 17, 20, 22, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35 և 36 ենթակետերում նշված որոշումներն ընդունվում են ձայների որակյալ մեծամասնությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով: Նշված որոշումները համարվում են ընդունված՝ քվեարկելիս «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ կողմից չնշանակված կամ վերջինիս կողմից չառաջադրված առնվազն երկու խորհրդի անդամների համաձայնության առկայության

պարագայում: Ընդ որում, 10-րդ ենթակետում նշված որոշումը համարվում է ընդունված՝ քվեարկելիս Խորհրդի կազմում Պրոպարկո ընկերության (Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերություն) ներկայացուցչի համաձայնության առկայության պարագայում,

2) Սույն կանոնադրության 8.11 կետի մնացած ենթակետերում նշված որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

8.20. Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

8.21. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով: Հեռակա կարգով Խորհրդի նիստ անցկացնելու դեպքում, նախապես, առնվազն մեկ օր առաջ, Խորհրդի յուրաքանչյուր անդամին ուղարկվում է նիստի օրակարգը և օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ստացվում է նրանց կարծիքները:

8.22. Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել նաև այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Սույն կարգով անցկացվող նիստերում կարող են որոշումներ ընդունվել միայն օրենքով չարգելված հարցերի վերաբերյալ: Կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով քվեարկությամբ Խորհրդի նիստ գումարվելու դեպքում կարող է նախատեսվել, որ քվեարկությունը կարող է տևել մեկ օրից ավել: Այդ դեպքում քվեարկության արդյունքներն ամփոփվում են դրա համար նախատեսված ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, նույն անձի կողմից մեկից ավել անգամ լրացված քվեաթերթիկ տրամադրելու դեպքում հաշվի է առնվում ավելի ուշ ներկայացված քվեաթերթիկը և/կամ դիրքորոշումը:

8.23. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

8.24. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:

Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

բ) նիստին մասնակցած անձինք,

գ) նիստի օրակարգը,

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր Խորհրդի անդամի,

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,

զ) նիստում ընդունված որոշումները:

8.25. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

8.26. Սույն կանոնադրության 8.22 կետում նշված կարգով անցկացվող Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է օրակարգի հարցերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման հիման վրա:

8.27. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

8.28. Խորհրդի հետ կապված բոլոր այն հարցերը, այդ թվում Խորհրդի անդամների ընտրության կամ նշանակման, Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման, Խորհրդի նիստերի գումարման և անցկացման հետ կապված հարցերը, որոնք չեն նախատեսվել սույն կանոնադրությամբ, կարգավորվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթներով:

(8-րդ բաժինը վերախմբագրվել է 25/04/2019թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ, փոփոխվել է 07/12/2021թ. ընդհանուր ժողովի թիվ 20-3 որոշմամբ, փոփոխվել է 21/11/2024թ. արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 25-3 որոշմամբ)

9. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

9.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենը: Գլխավոր գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, իսկ Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ: Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալներն իրավունք ունեն տալ Բանկի անունից դատավարական գործողություններ կատարելու և Բանկը դատարաններում ներկայացնելու վերաբերյալ լիազորագրեր:

9.2. Գլխավոր գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր: Գործարքներ կնքելիս և լիազորագրեր տալիս կարող է օգտագործվել Գլխավոր գործադիր տնօրենի ստորագրության ֆաքսիմիլ վերարտադրությունը և/կամ էլեկտրոնային թվային ստորագրությունը:

9.3. Գլխավոր գործադիր տնօրենը.

1) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,

2) նախօրոք քննարկում է Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի կողմից քննարկման ենթակա բոլոր հարցերը, որի համար պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը, կազմակերպում բաժնետերերի Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

3) Բանկի անունից կնքում է այնպիսի գործարքներ, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված չեն Խորհրդի և Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը,

4) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

5) հաստատում է աշխատատեղերը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին, լուծում է անձնակազմի ընտրության, տեղաբաշխման, պատրաստման և վերապատրաստման հարցերը,

6) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

7) կատարում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների միջև պարտականությունների բաշխումը,

8) իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

9.4. Գլխավոր գործադիր տնօրենի որոշումները, որպես կանոն, իրագործվում են նրա հրամանների և կարգադրությունների հիման վրա:

9.5. Գլխավոր գործադիր տնօրենը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:

9.6. Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին:

Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

9.7. Խորհրդի կողմից Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե.

1) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Գլխավոր գործադիր տնօրեն (բանկի ղեկավար),

3) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

9.8. Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն մասի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Գլխավոր գործադիր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

(9-րդ բաժինը վերախմբագրվել է 25/04/2019թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ, փոփոխվել է 07/12/2021թ. ընդհանուր ժողովի թիվ 20-3 որոշմամբ)

10. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

10.1. Բանկի գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

10.2. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ:

10.3. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

10.4. Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

10.5. Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

11. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

11.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

11.2. Բանկի ներքին աուդիտը Բանկի Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

1) անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ,

2) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս բանկի Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

11.3. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

1) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,

2) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր գործադիր տնօրենի կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

11.4. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք գրավոր ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

(11.2. կետը փոփոխվել է 23/04/2014թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 11 որոշմամբ)

12. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Բանկում հաշվապահական հաշվառման կազմակերպումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, ակտիվների, պարտավորությունների, սեփական հիմնադրամի, եկամուտների և ծախսերի ճանաչման և չափման չափանիշները կատարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի, հաշվապահական հաշվառման ստանդարտների, հարկային օրենսդրության, Կենտրոնական բանկի կողմից մշակված կանոնակարգերի և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան:

12.2. Բանկի գործունեության արդյունքներն արտացոլվում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով վերջինիս ներկայացվող հաշվետվություններում:

12.3. Բանկը կազմում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մամուլում հրապարակում է և Կենտրոնական բանկին ներկայացնում տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի հաստատված ձևերով:

(12.1. կետը փոփոխվել է 25/04/2019թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ)

13. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

13.1. Բանկի շահույթը գոյանում է նրա գործունեությունից ստացած հասույթից՝ գործառնական, աշխատանքի վարձատրության և այլ ծախսերը հանելուց հետո:

13.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան բյուջեի հանդեպ պարտավորությունները կատարելուց և պահուստներին մասհանումներ կատարելուց հետո շահույթը՝ Բանկի զարգացման նպատակով կարող է թողնվել որպես չբաշխված շահույթ կամ ուղղվել Բանկի կանոնադրական նպատակների իրագործմանը: Բանկը կարող է շահութաբաժիններ վճարել բացառապես տարեկան արդյունքներով:

13.3. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ վճարելն արգելվում է, եթե վճարման պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին Բանկի առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

(13-րդ բաժինը փոփոխվել է 28/04/2016թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 13 որոշմամբ; վերախմբագրվել է 25/04/2019թ. ընդհանուր ժողովի թիվ 17-5 որոշմամբ)

14. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ

14.1. Բանկը երաշխավորում է իր հաճախորդներին և թղթակցող բանկերին պահպանել գործարքների, նրանց հաշիվների վիճակի, ներդրումների, ինչպես նաև Բանկին տրված տեխնիկական և այլ տեղեկատվության գաղտնիքը:

14.2. Բանկի բոլոր աշխատակիցները, բաժնետերերը և նրանց ներկայացուցիչները պարտավոր են պահպանել բանկային գաղտնիքը:

15. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

15.1. Բանկի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը կատարվում է

Ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած՝ ընդհանուր ձայների 3/4-ով:

16. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

16.1. Բանկը կարող է վերակազմակերպվել՝ մեկ այլ բանկի հետ միացման և բանկի վերակազմավորման միջոցով:

16.2. Բանկի վերակազմավորումը (կազմակերպաիրավական ձևի փոփոխությունը) կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

16.3. Բանկի միացումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

17. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

17.1. Բանկի գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգին և սույն կանոնադրությանը համապատասխան:

17.2. Բանկի լուծարման դեպքում դրամական միջոցները, ներառյալ նրա գույքի վաճառքից գոյացած հասույթը, բյուջեի, աշխատանքի վարձատրության գծով Բանկի աշխատողների, ավանդատու քաղաքացիների, բանկերի և այլ կրեդիտորների հետ հաշվարկները կատարելուց հետո, բաշխվում են բաժնետերերի միջև՝ նրանց բաժնետոմսերին համապատասխան:

17.3. Բանկի գործունեության դադարեցման մասին հայտարարությունը հրապարակվում է մամուլում: